«ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցներով»

Քաջարան 2026 թ.

Հաստատում եմ՝

Պատվիրատու՝
Քաջարան համայնքի ղեկավար
Մանվել Փարամազյան

______________________
(ստորագրություն)

„_____“ ___________ 2026 թ.

Համաձայնեցված է՝

Քաջարան համայնքի ղեկավար
Մանվել Փարամազյան

______________________
(ստորագրություն)

„_____“ ___________ 2026 թ.

Աշխատանքի անվանումը՝ «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցներով»

Հասցեն՝ ՀՀ Քաջարան համայնք, ք. Քաջարան
Չարենցի 2 հասցեով բնակելի շենք

1. Ճարտարապետաշինարարական մաս
2. Նախահաշիվ

ԿԱՏԱՐՈՂ „ՀԱԽՅԱՆ„ ՍՊԸ
Տնօրեն Է. Պետրոսյան

Քաջարան 2026 թ.

«ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ

# «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցներով»

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

**Քաջարան 2026 թ.**

ՁԵ. N 1-2

PMFF-26F6-B7DC-DE97

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-11753-25 22.12.2025թ.**

Օբյեկտ **Նորոգում, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝Էներգախնայող միջոցների կիրառմամբ,, գործառնական նշանակության փոփոխություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ Էներգախնաիող միջոցների կիրառմամբ**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենց փողոցի թիվ 2բազմաբնակարան շենքի նորոգում՝445,0 քմ տանիքի առկա ծածկի քանդում և նոր ծածկի կառուցում,շքամուտքերի և աստիճանավարդակների բարեկարգում,արդյունավետ դռների և պատուհանների տեղադրում,աստիճանավանդակների էներգաարդյունավետ լուսավորության համակարգի կառուցում,շենքի արտաքին պատերի վնասված հատվածների վերականգնում:

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

**նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ III** նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենց փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենք,**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **Քաջարանի համայնքապետարան / 09426045 / ք. Քաջարան Լեռնագործների 4**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 22.06.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

1. Հողամասը գտնվում է — Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափսերը

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))

3. Հողամասի առկա վիճակը — Բազմաբնակարան շենք

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — Առկա են

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

| | |
|---|---|
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | Առկա են<br>(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | Բազմաբնակարան շենքեր, ճանապարհ<br>(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | Առկա չէ<br>(հուշարձանի անվանումը) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | Առկա չէ<br>(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

## Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն   Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից<br>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | - |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | -<br>սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | - |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | 100% |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) | - |
| 9.7 այլ պահանջներ | Առկա չէ |
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | Առկա չէ |

| | |
|---|---|
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | Առկա չէ |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | - |
| 12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում | Առկա է<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2 (*) Էլեկտրամատակարարում | Առկա է<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | Առկա է<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | -<br>(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | Անհրաժեշտ չէ |
| 12.6. աղբահանություն | Համաձայն պայմանագրի |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | -<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | -<br>(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Շաղախ,փայտի կոնստրուկցիաներ,տանիքի թիթեղ, ներկանյութեր և այլն<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | -<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներ | Ելնելով ՀՀ ՇՆ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | - |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | Ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները<br>(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | -<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | մինչև 22.06.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,<br>(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Պարզ փորձաքննություն հարկավոր է<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | Համաձայնեցնել համայնքի ղեկավարի հետ<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով) |

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

28. Այլ պայմաններ

Նախագծի կազմում ներառել շինարարական աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

22.12.2025

**ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ**

Հավելված N 01
02 Դեկտեմբերի 2025թ. կնքված N 30 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ (Քաջարան քաղաքի Լեռնագործներ 16, Աբովյան 10,Չարենց 1, Չարենցի 2, Շիրվանզադե 4 շենքեր)**

***Ծրագրի անվանումը*** *Համայնքի ենթակառուցվածքների զարգացման ծրագիր*
***Ֆինանսավորման աղբյուր*** *Քաջարանի համայնքապետարան*
***Պատվիրատու*** *Քաջարանի համայնքապետարան*
***Ծառայության անվանումը*** *Քաջարան քաղաքի Քաջարան քաղաքի Լեռնագործներ 16, Աբովյան10,Չարենցի 1, Չարենց 2, Շիրվանզադե 4 շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման նախագծի պատրաստում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ*
***Նախագծման փուլ*** *Աշխատանքային նախագիծ*

- ✓ *նախագծի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն 4 թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով):*
- ✓ *Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:*

***Ընդհանուր դրույթներ***

*Հասցեն՝ Քաջարան համայնք, ք. Քաջարան, Լեռնագործներ 16, Աբովյան 10, Չարենց 1, Չարենց 2, Շիրվանզադե 4 շենքեր:*

*Քաջարան համայնքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Համայնքի կենտրոն Քաջարան քաղաքի հեռավորությունը Երևանից 330կմ է, մարզկենտրոն Կապանից՝ 25կմ:*

*Համայնքն ունի 75 բազմաբնակարան շենք, որից 70-ը Քաջարան քաղաքում են, 3-ը՝ Բաբիկավան բնակավայրում, 2-ը՝ Անդոկավան գյուղում: 70 շենք կառուցվել է 1967-1972թթ-ին, 5-ը՝ 1982-1985թթ-ին:*

*Մինչև 1990թ. շենքերը ջեռուցվում էին կենտրոնական կաթսայատան միջոցով: Այնուհետև բնակիչները անցան անհատական ջեռուցման փայտի, էլեկտրականության և գազի միջոցով: Այժմ մեծամասամբ գազով են ջեռուցվում բնակարանները:*

*Շենքերի տանիքների մեծ մասը 2004-05թթ մասնակի վերանորոգվել են, որոնք ընթացիկ նորոգումներ չիրականացվելու պատճառով շարքից դուրս են եկել:*

*Շենքերը գազաֆիկացված են:*

*Շենքերի էներգաարդյունավետության բարձրացման որևէ միջոցառում չի իրականացվել: Աստիճանավանդակների լուսավորությունը անհատապես է կազմակերպվում՝ անարդյունավետ եղանակներով:*

*1980- ական թ.-ից շենքերի ընդհանուր օգտագործման տարրերի վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել. պատուհանները փայտյա ու մաշված են, մեծ մասը ապակիներ չունեն, դռները մետաղյա են, ջերմամեկուսացում չեն ապահովում:*

*Ընտրված շենքերը ամենախնդրահարույցն են՝ տանիքների, ջրահեռացման համակարգի խողովակների մաշվածության աստիճանի առումով: Շենքի ֆիզիկական վիճակի վերաբերյալ՝ համատիրությանը հասցեագրվող բողոքների առումով ևս այս շենքերը առաջատար դիրքերում են:*

*Ջեռուցման սեզոնի տևողությունը քաղաքում 5-6 ամիս է: Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը ջեռուցման սեզոնին՝ -1,2°C, միջին նվազագույն ջերմաստիճանը՝ -5,2 °C:*



## ՏՎՅԱԼՆԵՐ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Հիմնական պարտականություններ և պահանջներ*

*Հիմնական պարտականություններ՝*

| Շենքի հասցե / Տվյալներ | Լեռնագործներ 16 | Աբովյան 10 | Չարենց 1 | Չարենց 2 | Շիրվանզադե 4 |
|---|---|---|---|---|---|
| Կառուցման տարեթիվ | 1960թ | 1968թ | 1962թ | 1967թ | 1964թ |
| Շենքի տեսակը | ինքնակրող | ինքնակրող | ինքնակրող | ինքնակրող | ինքնակրող |
| Մուտքերի թիվը | 3 | 2 | 2 | 2 | 3 |
| Հարկերի թիվը | 5 | 4 | 4 | 5 | 5 |
| Նկուղի առկայություն | այո | ոչ | այո | այո | ոչ |
| Շենքի չափերը, մ ե/լ/բ | 51x12x15 | 40x12x12 | 35x12.7x10.3 | 35x12.7x12.5 | 50x12x13.8 |
| Բնակարանների թիվը | 30 | 30 | 28 | 28 | 44 |
| Բնակելի մակերեսը, մ² | 1700 | 1700 | 1180 | 1136 | 1720 |
| Տանիքը ձևը,նյութը, վիճակը | Թեք, թիթեղյա, ոչ բավարար | Թեք, թիթեղյա, ոչ բավարար | Թեք, թիթեղյա, ոչ բավարար | Թեք, թիթեղյա, ոչ բավարար | Թեք, թիթեղյա, ոչ բավարար |
| Էլ. Ցանց | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար |
| Գազի ցանց | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար |
| Ջրի ցանց | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար |
| Ջրահեռացում | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար | Առկա է: Բավարար |

*ա. ներկայացնել մանրամասնորեն ուսումնասիրման արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ;*

*բ. նախագիծը մշակել գործող բոլոր ՀՀ շինարարական նորմերի պահանջների համաձայն;*

*գ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները,*

- ✓ *Կապալառուն պարտավոր է ձեռք բերել շենքի բոլոր անհրաժեշտ ծավալահատակագծային փաստաթղթերը կամ իրականացնել շենքի մանրամասն չափագրում:*
- ✓ *Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ընթացքում այն համաձայնեցնել Պատվիրատուի հետ:*
- ✓ *ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը (ժամանակացույցը)*

- ✓ *շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները*

***<u>Գնային առաջարկ(ներ)ը պետք է ներկայացվեն ըստ չափաբաժինների՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձնացված գնառաջարկով:</u>***

**Նախագծի նկատմամաբ պահանջներ**

*Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:*

*Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝*

- ✓ *Տանիքի առկա ծածկի քանդում, նոր ծածկի կառուցում*
- ✓ *Ըստ անհրաժեշտության տանիքի փայտամածի թարմացում*
- ✓ *Ներքին հարդարման աշխատանքների նախատեսում (պատեր, առաստաղ, հատակներ, բազրիք և այլն)*
- ✓ *Էներգաարդյունավետ պատուհանների տեղադրում աստիճանավանդակներում, պատուհանագոգերի տեղադրում, հերմետիկացում*
- ✓ *Առկա դռների վերանորոգում, ջերմամեկուսացում: Փակման սարքի տեղադրում (շվեցար)*
- ✓ *Արտաքին պատերի վնասված հատվածների վերականգնում*
- ✓ *Արհեստական լուսավորության ապահովում աստիճանավանդակներում և հարթակներում՝ տեղադրելով լուսադիոդային (LED) – լուսատուներ, լուսավորության և շարժման տվիչներ, կատարելով համապատասխան հաշվարկներ (գունային ջերմաստիճանը ≤ 4,000 °K), ցանցերի մաս-մաս և ընդհանուր փորձարկում:*

***Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝***

1. *Ընդհանուր բացատրագիր:*
2. *Տիպային հարկի հատակագծեր, ցույց տալով կոնստրուկցիաների բոլոր տարրերը (երկաթբետոնե կառուցվածքային տարրեր, մետաղական կառուցվածքներ, մետաղական կոնստրուկցիաների մանրամասներ, փայտե կառուցվածքներ և այլն):*
3. *Շենքի ճակատների բոլոր հիմնական տարրերի կտրվածքների գծագրերը՝ տանիքածածկի, առաստաղի, արտաքին պատերի, դռների և պատուհանների:*
4. *Արտաքին պատերի մանրամասն գծագրերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խողովակները, ջրահեռացման խողովակները և ջրհորդանները, կախոցները, հեռահաղորդակցության ակսեսուարները և այլն:*
5. *Անձրևաջրերի ջրահեռացման միացումների կամ ջրահեռացման այլ համապատասխան լուծումների մանրամասն գծագրեր:*
6. *Հարթակների և աստիճանավանդակների ներքին լուսավորության մանրամասն գծագրերը գծային սխեմայով:*
7. *Բոլոր նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրերը որոնք օգտագործվելու են շինարարության ընթացքում՝ մասնավորապես, սարքավորումների և շինվածքների մանրամասն բնութագիրը (ջերմամեկուսիչ նյութեր, պատուհաններ, դռներ, լուսավորության համակարգեր և այլն):*
8. *Տեխնիկական մասնագրերը պետք է նաև ներառեն վերը նշված բոլոր մեխանիկական, էլեկտրական և սանտեխնիկական սարքավորումները և նյութերը, ինչպես նաև յուրաքանչյուր համակարգի, սարքավորման կամ նյութի տեղադրման/մոնտաժման աշխատանքների մանրամասն նկարագիրը:*
9. *Շրջակա միջավայրի պահպանման պլան:*
10. *Առողջապահական և անվտանգության պլան:*
11. *Շինարարության կազմակերպում՝ շինարարության տևողության (ժամանակացույց) հաշվարկով:*
12. *Նախահաշվային փաստաթղթեր և ծավալաթերթ:*

    *Հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների, շինվածքների և կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր և մասնագրեր:*
13. *Բոլոր ամփոփագրերն ու մասնագրերը (քանդման աշխատանքներ, կառուցման աշխատանքներ) պետք է լինեն աղյուսակային տեսքի, որտեղ պետք է երևան ծավալները: Նախահաշիվը պետք է ներկայացվի*



*առանձին բոլոր տարրերի համար (արտաքին պատեր, վերնածածկ, նկուղի ծածկ, դռներ և պատուհաններ, լուսավորություն):*

***Համաձայնեցումներ՝***

- ✓ *Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի,լցակույտի և շինարարական աղբի տեղերը,*
- ✓ *Կոմունիկացիաների(ջրագծի,գազատարի,կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:*

**Նորմատիվային պահանջներ**

- *ՀՀՇՆ 20-06-2014 Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթեր*
- *«ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»,*
- *ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր»,*
- *ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ»,*
- *ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում»,*
- *ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ»*
- *ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերին:*
- *ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»:*
- *ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշում. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:*
- *ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»:*

| <u>Պատվիրատուն</u> | <u>Կատարող</u> | <u>Ֆինանսավորող</u> |
|---|---|---|
| «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական» հիմնարկ<br>ք. Քաջարան Լեռնագործների 4<br>ՀՀ ՖՆ գործառն. վարչ.<br>հվհհ 09426045<br>Համայնքի ղեկավար՝<br>Մ. Փարամազյան | «Հախյան» ՍՊԸ<br>ք.Կապան,Երկաթուղայինների 15/14<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570087409510200<br>ՀՎՀՀ 09422414<br>Տնօրեն՝<br>Է. Պետրոսյան | «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամ<br>ք. Քաջարան, Լեռնագործների 18<br>ՀՎՀՀ՝ 09424487<br>«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ<br>«Քաջարան» մ/ճ,<br>Հ/Հ՝ 2471201808200000<br>Տնօրեն՝<br>Ա. Ստեփանյան |

«ՏՐԻՎԻՈՒՄ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ
ԼԻՑԵՆԶԻԱ 18310

TRIVIUM EXPERT

ООО «ТРИВИУМ ЭКСПЕРТ»
ЛИЦЕНЗИЯ 18310

"TRIVIUM EXPERT" LLC

ՀՀ ք. Կապան
Գարեգին Նժդեհ 14-1
Հեռ. 093-00-93-08

РА г. Капан
Ул. Гарегин Нжде 14-1
Тел; 093-00-93-08




## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԲՅԵԿՏ՝ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնք, Քաջարան քաղաք, Չարենցի փողոցի բազմաբնակարան թիվ 2 շենքի շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՝ *Քաջարանի համայնքապետարան*

*«ՏՐԻՎԻՈՒՄ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն* [signature] *Ի. Մանուկյան*

2026թ

---

«ՏՐԻՎԻՈՒՄ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ
ԼԻՑԵՆԶԻԱ 18310

TRIVIUM EXPERT

ООО «ТРИВИУМ ЭКСПЕРТ»
ЛИЦЕНЗИЯ 000693

"TRIVIUM EXPERT" LLC

*«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»*

*«ՏՐԻՎԻՈՒՄ ԷՔՍՊԵՐՏ»*

*Տնօրեն Ի. Մանուկյան*

„ 19 „ 01 2026թ.

## Եզրակացություն

**ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնք, Քաջարան քաղաք, Չարենցի փողոցի բազմաբնակարան թիվ 2 շենքի շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ**

Հետազննությունը կատարվել է «Տրիվիում Էքսպերտ» ՍՊ ընկերության Քաջարանի համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի համաձայն:

Վերը նշված հասցեի շենքն իրենից ներկայացնում է թեք տեղանքի վրա տեղակայված, բազմակի օտագործման նախագծով իրականացված չորս հարկանի «բնակելի» գործառնական նշանակության կառույց:

*Շինության ծավալահատակագծային լուծումները*

Բազմաբնակարան թիվ 2 շենքը կառուցվել է 1960-ական թվականների առաջին կեսում:

Շենքը երկայնական կրող և լայնական կապող պատերով և միջհարկային ծածկերի ու վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով կառույց է, ունի երկու մուտք, չորս հարկանի, հարկերի բարձրությունը՝ 3.0մետր:

Շենքը գտնվում է մեծ թեքության ռելիեֆ շենքի երկայնական ճակատներում 2.1մ բարձրության տարբերությամբ բերված հարող հարթակների միջև: Պատվիրատուի կողմից նախատեսվում է հիմնանորոգել ընդհանուր օգտագործման տարածքները՝ տանիքը, ընդհանուր մուտքերը, շենքին հարող սալվածքը և հենապատը:

*Շենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է՝*

- երկայնական կրող և լայնական կապող պատերի տակ՝ քարե խամքարաշար ժապավենային խաչատիպավոր հիմքեր:
- Արտաքին կրող պատերը գլխավոր և կողմնային ճակատներում իրականացված են 50սմ հաստությամբ տուֆ քարի «միդիս» շարվածքով, ետնամասի արտաքին ճակատում և ներքին կրող պատերը 50սմ հաստությամբ տուֆ քարից շարվածք: Կարաններում կրաավազացեմենտային շաղախի տեսականիշը Մ50 ոչ պակաս:
- Միջհարկային ծածկն ու վերնածածկը իրականացված է հավաքովի ե/բետոնե սալերով:
- Պատերում հարկերի մակարդակում իրականացված է հակասեյսմիկ գոտի-բարավոր:
- Աստիճանահարթակները և աստիճանաթռիչքները՝ հավաքովի ե/բետոնե տարրերով,:
- Աստիճանահարթակները՝ ե/բետոնե, աստիճանաթռիչքը՝ պողպատե պրոֆիլներից, աստիճանները՝ հատավոր, ե/բետոնե: Հետնամասից մուտքերի շքամուտքների աստիճանները 2.10 նիշից մինչև 0.00 նիշը՝ հատավոր հավաքովի ե/բետոնե, հենված բուտաբետոնե հիմքի վրա:
- Ետնամասի լանջին հարող երկայնական ճակատի երրորդ և չորրորդ հարկերի որոշ բնակարաններում իրականացված են մետաղե հիմնակմախքով պատշգամբներ:
- Տանիքը փայտե կրող տարրերով ծպեղային համակարգի, քառաթեք, լանջավոր, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ է, տանիքածածկը՝ КП25 պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով:

***Շենքի զննումից պարզվեց հետևյալը.***

1. Բազմաբնակարան թիվ 2 շենքը կառուցվել է 1960-ական թվականների առաջին կեսում մինչև 1968թվականի երկրաշարժը, պարզ է, որ կոնստրուկտիվ համակարգը իրականացված չէ ներկայումս գործող ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերի պահանջներին համապատասխան: Կատարված զննումներից պարզվեց՝
   - Շենքի հիմնակմախքի կրող հիմնական տարրերում վնասվածքներ չեն հայտնաբերվել, չնայած տանիքի ծպեղային համակարգի կրող տարրերի և տանիքածածկի ոչ բարվոք վիճակի:
2. Բազմաբնակարան շենքում ակնադիտական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ շենքի կոնստրուկտիվ տարրերում առկա են հետևյալ վնասվածքներն ու թերությունները.
   - Շենքի քարե շարվածքով խարսխային պատվանդանի ցեմենտաավազային երեսապատը մակերևույթի 10% ծավալում քայքայված է, պոկված շարվածքից:
   - Շենքի աստիճանավանդակներում ներքին հարդարման աշխատանքներ չեն կատարվել շուրջ 30 տարի, ջերմախոնավային ազդեցություններից, նախկին քայքայված ծեփաշերտերի վրա իրականացված ծեփաշերտերը պատերի և առաստաղի մակերևույթներում գտնվում է քայքայված վիճակում մակերևույթի 80% ծավալում:
   - Շենքի աստիճանավանդակներում 2.10 նիշից մինչև 3.00նիշը և 2.10 նիշից մինչև 0.00 նիշը շքամուտքի հատավոր ե/բետոնե աստիճանները տեղաշարժված են, մուտքերի հարթակների բետոնե հատակներում առկա են զգալի վնասվածքներ:
   - Սանդուղքների հատային ե/բետոնե աստիճանները ամրացված չեն մետաղե սանդղահեծաններին ՀՀՇՆ 20.04-2020 նախագծման նորմերի 101 կետի պահանջի համապատասխան:
   - Սանդուղքներում սանդղաքայլերի պողպատե հեծանները և սանդղահարթակների կողահեծանները կրապաշտպան ծածկույթով պատված չեն, որը գործող հակահրդեհային նորմերին չի համապատասխանում:
   - Շենքի ծպեղային համակարգով իրականացված տանիքի կրող տարրերի տեխնիկական վիճակը անբավարար է, ունեն հետևյալ բնորոշ թերություններն ու վնասվածքները՝
     - ✓ փայտե ծպեղնատակերի(Ø18սմ, 1.2մ միջին քայլերով), կանգնակների(Ø18սմ, 3.2մ միջին քայլերով), թեքանների(Ø12սմ) կրող տարրեր իրականացված են գերաններից, տափաստների(15×12(h)սմ հատույթով), գագաթնագծի մարդակի(14×14(h)սմ հատույթով), ձգանների(24×2.2(h)սմ հատույթով), անկյունային ամրացուցիչների՝ շպրենգելների(Ø12սմ) տարրերում առկա են 40մմ խորությունից ավել երկայնական ճեղքեր, չորաճաքեր տարրերի երկայնական առանցքների ուղղությամբ՝ տարրերի 60% ծավալում,
     - ✓ տարրերի միացման և հենարանային հանգույցների տեղափոխություն, կցանչատում, ձևախախտում, անհրաժեշտ քանակով տեղադրված չեն ամրակապեր, տեղադրված ամրակապերը ենթարկվել են զգալի կոռոզիայի, հատկապես կապերի խարխված հատվածներում,
     - ✓ հենարանային փայտե տարրերի(տապաստներ, տակդիրներ, որմնափայտեր) և պատերի միջև ռուբերոիդից ջրամեկուսիչ շերտը քայքայված վիճակում է, զգալի

տեղերում բացակայում է, հենարանային տարրերը որոշ հատվածներում տեղադրված են ընդհատումներում,

- ✓ փայտե տարրերի 90% մակերևույթի վրա բացակայում է, երկար ժամանակահատվածում չի քսվել հականեխիչ և հրապաշտպան տոգորանյութերը, տարրերի զգալի մակերևույթներից չեն հեռացված փայտանյութի կեղևը, հատկապես կավարամածի տախտակե տարրերում,

- Շենքի տանիքածածկը գտնվում է անբավարար տեխնիկական վիճակում՝ թե ֆիզիկական մաշվածության, թե անվտանգ շահագործման տեսանկյունից, չնայած 15 տարի առաջ կատարվել է հիմնանորոգում՝
  - ✓ տանիքածածկը փոխարինվել է 0.35մմ հաստությամբ КП25 ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով՝ ամբողջությամբ փոխված տանիքածածկի ցինկապատ թիթեղը գունաթափվել է, չունի ցինկապատ թիթեղին բնորոշ տեսք, գույն, 10% մակերևույթում ենթարկվել է զգալի կոռոզիայի՝ ժանգոտվել է,
  - ✓ տանիքածածկի ջրհոս ձողերը վերանորոգումից հետո տեղադրված են 0.4մմ ցինկապատ թիթեղով, զագաթնագիծը փակող և ձեղնահարկի լուսամուտների անկյունները պարփակող գոգնոցները վերանորոգումից հետո տեղադրված են 0.25մմ ցինկապատ թիթեղով, որը նույնպես գունաթափվել է, չունի ցինկապատ թիթեղին բնորոշ տեսք, գույն, 20% մակերևույթում ենթարկվել է զգալի կոռոզիայի՝ ժանգոտվել է:
  - ✓ կավարամածի փայտե տախտակները(1.8սմ հաստությամբ, 10÷12սմ լայնությամբ, 0.40÷0.50մ քայլերով) տանիքածածկի տեղադրման զգալի մակերևույթում(կավարամածի վերին նիստ) տեղադրված են ոչ համահարթաչափ տանիքների թեք լանջերում, կավարամածի փայտանյութը ունի զգալի խորը փթածվածություն, որը պատճառ է հանդիսացել տանիքածածկի ամրացման մեխերի դուրսպրծմանը հարափոփոխվող ձյան, քամու բեռնվածքների, օդի ջերմաստիճանի կտրուկ փոփոխման ազդեցությունների տակ:
  - ✓ տանիքածածկի ջրհոս ձողերի համակարգով անձրևաջրերի կազմակերպված ջրահեռացում կատարվում է միայն հիմնական երկայնական պատերի միջև եղած մակերևույթից, պատշգամբների տիրույթում գործում անձրևաջրերի չկազմակերպված ջրահեռացում, որը պատճառ է հանդիսանում տեղումների ժամանակ արտաքին պատերի խոնավացմանը:
  - ✓ ջրորդան խողովակների Ø140մմ տրամագծով է, որը չի ապահովվում բավարար թողունակություն: Անհրաժեշտ քանակությամբ չեն տեղադրված ջրորդան խողովակները՝ համապատասխան ջրահավաք մակերևույթների: Սալվածքից անհրաժեշտ 20÷30սմ բարձրության վրա չէ վերջանում ջրորդանի ելքը, իրականացված չեն ջրհեռ ծնկով:
  - ✓ բնական օդափոխության հորանների մեծ մասի գլխամասում տեղադրված չէ ծածկ, թասակ, որոշ հորանների գլխամասում քայքայված, կոտրված են շինվածքի տարրերը՝ ըստ բարձրության մինչև 40սմ սահմաններում, առկա իրավիճակի պատճառով անձրևաջրերը, ձյունը հորանների անցքերով ներհոսում են շենքի ցածր նիշեր՝ առաջացնելով կոնստրուկցիաներում ջրակալում, իսկ սենքերում խոնավություն:
  - ✓ տանիքի պարագծով տեղադրված չեն տանիքի ցանկապատ, արգելապատնեշ:
  - ✓ տանիքում տեղադրված չեն ձյունապաշտպան արգելանքներ:
- շենքի ձեղնահարկում կուտակված է շինարարկան աղբ, հին իրեր:
- շենքի կրող կոնստրուկտիվ համակարգի և ինքնակրող տարրերում անթույլատրելի ճաքեր, ճկվածքներ, նստվածքային և այլ բնույթի դեֆորմացիաներ ու վնասվածքներ չեն արձանագրվում:

Շենքի ընդհանուր և առանձին մասերի առկա վիճակի տեսքն ու լուծումները տես կից հավելվածի դրվագային լուսանկարներում:

*Շենքի հիմնանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ է՝*

Հաշվի առնելով Քաջարան քաղաքի Չարենցի փողոցի բազմաբնակարան թիվ 2 շենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների առանձնահատկությունները, փաստացի տեխնիկականվիճակը, ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստիճանները, սեյսմիկ խոցելիության մակարդակը, շահագործման ժամկետը, և այն հանգամանքը, որ շենքը նախագծվել ու կառուցվել է 7-8 բալ սեյսմակայունության հաշվարկով, իսկ ըստ ՀՀ ներկայումս գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի Քաջարան քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երկրորդ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն Amax=0.4g արագացումով, առաջարկվում է ներկա փուլում շենքի նորմալ շահագործման պայմանների բարելավման միջոցառումների իրականացում.

- ➢ Ամբողջովին փոխել տանիքի կրող տարրերը և տանիքածածկը, ջրորդանների համույթը ընդունել Ø150մմ տրամագծից ոչ պակաս՝ անհրաժեշտ նորմալ շահագործման պայմաններ ապահովվելու համար:
- ➢ Վերականգնել գետնախարսխի քայքայված մակերևույթը:

➢ Ընդհանուր օգտագործման ստտիճանավանդակներում իրականացնել նորոգման աշխատանքներ:

➢ Ձեռնահարկից հեռացնել շինաղբը՝ ելնելով սանիտարական և հակահրդեհային պայմանների բարելավման անհրաժեշտությունից:

Բազմաբնակարան շենքի շինարարության իրականացման ընթացքում հայտնաբերված լրացուցիչ միջոցառումների կատարման անհրաժեշտության դեպքում, որոնք ներկայացված չեն սույն եզրակացությունում, պետք է լուծվեն աշխատանքային կարգով, նախագծում կատարելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

*Ելնելով հետազննության արդյունքներից եզրակացնում ենք.*

1. Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաք, Չարենցի փողոցի բազմաբնակարան թիվ 2 շենքի

- տեխնիկական վիճակը ըստ կրող կոնստրուկցիաների վնասվածության, նորմատիվ սանդղակների չափորոշիչներով ընդհանուր առմամբ գնահատվում է բավարար (վնասվածության 2-րդ աստիճան), առկա վիճակով կոնստրուկտիվ կրող տարրերը, բացի տանիքից և տանիքածածկից, պիտանի են հետագա հուսալի շահագործման համար, այն է  անհրաժեշտ է տվյալ պահին կատարել կապիտալ նորոգում:
- տանիքի ծպեղային համակարգով փայտե կրող տարրերի և տանիքածածկի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար (վնասվածության 3-րդ աստիճան), այն առկա վիճակով ունի զգալի մաշվածության, հուսալի չէ հետագա շահագործման համար: Անհրաժեշտ է իրականացնել հիմնանորոգում:

Շահագործման բարձրացման նպատակով նախատեսվող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնել սահմանված կարգով մշակված և հաստատված նախագծի հիման վրա, շինարարական աշխատանքները կատարել ՀՀ գործող նորմանների և կանոնների համաձայն:

Կոնստրուկտոր՝ Ա. Խաչատրյան

Հավելված

Շենքի ընդհանուր և առանձին մասերի տեսքն ու լուծումները պատկերող դրվագային լուսանկարներ





«TRIVIUM-EXPERT»
«ТРИВИУМ-ЭКСПЕРТ»
09421036

# Ընդհանուր իրավիճակային հատակագիծ




«ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքիՔաջարան քաղաքի բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցներով»

1. Լեռնագործների փողոց, բն. շենք N16
2. Աբովյան փողոց, բն. շենք N10
3. Չարենցի փողոց, բն. շենք N1
4. Չարենցի փողոց, բն. շենք N2
5. Շիրվանզադե փողոց, բն. շենք N4

«ՀԱԽՅԱՆ» «АХЯН» «HAXYAN» 09422414

## Գծագրերի անվանացանկ

| Թերթ | Անվանումը | Ծանոթություն |
|---|---|---|
| 0 | Ընդհանուր իրավիճակային հատակագիծ | |
| 1 | Գծագրերի անվանացանկ; Ընդհանուր տվյալներ; Բացատրագիր | |
| 2 | Տեղային իրավիճակային հատակագիծ | |
| 3 | Հատակագծեր (Չափագրական); Կտրվածք 1-1(Չափագրական) | |
| 4 | Տանիքածածկի և Վերնահարկի հատակագծեր (Չափագրական) | |
| 5 | Ճակատներ Ա-Գ; 7-1; Գ-Ա; 1-7 առանցքներով (Չափագրական) | |
| 6 | Առաջին և Տիպային հարկերի հատակագիծ; Կտրվածք 1-1 | |
| 7 | Տանիքածածկի և Վերնահարկի հատակագծեր | |
| 8 | Ճակատներ Ա-Գ; 7-1; Գ-Ա; 1-7 առանցքներով | |
| 9 | Օդափոխության հորանի ծածկ | |
| 10 | Օդափոխության հորանի պատերի երեսապատում | |
| 11 | Հատույթներ և հանգույցներ | |
| 12 | Աշխատանքների և նյութերի մասնագրեր | |
| 13 | Ծածկի կարկասի տարրերի տեղակ. սխեմա, մաս-1;Կտրվածք A-A | |
| 14 | Ծածկի կարկասի տարրերի տեղակայման սխեմա, մաս-2 | |
| 15 | Կտրվածք Б-Б; Հանգույցներ 3,4,5 | |
| 16 | Կտրվածք В-В; Հանգույցներ 6,7,8,9 | |
| 17 | Կտրվածք Г-Г; Д-Д; Հանգույցներ 10,11 | |
| 18 | Տարրերի մասնագիր ըստ թերթեր 13-:-17 | |
| 19 | Մետաղական պաշտպանիչ բազրիք | |
| 20 | Մետաղական ուղղաձիգ սանդուղք դեպի տանիք | |
| 21 | Մետաղական ուղղաձիգ սանդուղք դեպի ձեղնահարկ | |
| 22 | Շինարարության կազմակերպում՝ ընդհանուր դրույթներ | |
| 23 | Շինարարության կազմակերպում՝ ժամանակավոր շինություններ | |
| 24 | Շինարարության կազմակերպման օրացույցային գրաֆիկ | |
| 25 | Էլ.տեխնիկական մաս՝ ընդհանուր ցուցումներ, էլ. վահանակի սխեմա | |
| 26 | Էլ.տեխնիկական մաս՝ Հատակագծեր | |

## Օգտագործվող նյութեր

- ՀՀՇՆ 20-06-2014 Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթեր
- «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»,
- ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր»,
- ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ»,
- ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում»,
- ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ»
- ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերին:
- ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»:
- ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշում. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայո-ղության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:
-ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»:

## Բացատրագիր

«ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում՝ էներգախնայող միջոցներով» նախագծային փաստաթղթերը մշակված են Քաջարանի համայնքապետարանի կողմից տրված Աշխատանքների կատարման Տեխնիկական բնութագրի, « Տրիվիում էքսպերտ» ՍՊ ընկերության Տեխնիկական եզրակացության շրջանակներում և ՀՀ շինարարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխան:

Շենքի աստիճանավանդակների և տանիքածածկի առկա վիճակի նկարագիրը ըստ տեխնիկական վիճակի հետազոտության եզրակացության դրույթների .

- Աստիճանավանդակների պատերի և առաստաղների (աստիճանատակերի) ծեփաշերտը գտնվում է քայքայված վիճակում
- Շքամուտքի հատակի և աստիճանահարթակների բետոնե ծածույթում առկա են զգալի վնասված հատվածներ
- Շենքի ծպեղային համակարգով իրականացված տանիքի կրող տարրերի տեխնիկական վիճակը անբավարար է
- Շենքի տանիքածածկը ֆիզիկական մաշվածության և անվտանգ շահագործման տեսանկյունից գտնվում է անբավարար տեխնիկական վիճակում
- Ջրհորդան խողովակների Ф-108մմ տրամագիծը չի ապահովում բավարար թողունակություն
- Օդափոխության հորանների գլխամասային հատվածներում առկա են քայքայված, կոտրված հատվածներ:

Նախագծով նախատեսված են աստիճանավանդակների և տանիքածածկի վերանորոգման հետևյալ աշխատանքները.

- Պրոֆիլավոր տանիքածածկի, թիթեղից ծածկույթների քանդում
- Հին փայտե կոնստրուկցիաների քանդում
- Վերնածածկի քայքայված շերտերի, ջերմամեկուսիչ շերտի քանդում: Կտուրում կուտակված շինաղբի մաքրում դուրս բերում:
- Փայտե նոր կոնստրուկցիաների իրականացում: Ջրհորդանների տեղադրում գունավոր թիթեղով: Տանիքածածկի իրականացում գունավոր КП-21-0,5մմ պրոֆիլավոր թիթեղով: Օդափոխության հորանների պատերի վերականգնում, երեսապատում КП-10-0.5մմ գունավոր պրեֆիլավոր թիթեղով: Ф-150մմ ջրահեռացման խողովակների մոնտաժում: Օդահան Ф-315 մմ դեֆլեկտորների մոնտաժում: Ծածկի ջերմամեկուսացման իրականացում 150 մմ հաստությամբ
- Աստիճանավանդակների ներքին հարդարման վերանորոգում: Հարթակների երեսապատում բազալտե 30մմ սալերով
- Փայտե հին պատուհանների փոխարինում մետաղապլաստե ջերմամեկուսիչ պատուհաններով: Մուտքի մետաղական դռների ջերմամեկուսացում հանքային բամբակով:

Վերականգնման աշխատանքները իրականացվում են շենքի ծավալատարածական ներկա գոյություն ունեցող չափորոշիչների շրջանակներում:

Պատվիրատուի պահանջով КП-25-0,5մմ պրոֆիլավոր թիթեղը փոխարինվել էКП-21-0,5մմ թիթեղով

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան | Մակնիշ- ՃՇ | | |
| Ն.Գ.Ճ. | Ս. Հախյան | | | | | |
| Կոնստրուկտոր | Վ. Բաղալյան | | «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում էներգախնայող միջոցներով» | Փուլ | Թերթ | Թերթեր |
| Նախագծեց | Ա. Տոշին | | | ԱՆ | 1 | 26 |
| | | | Գծագրերի անվանացանկ Բացատրագիր | «ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ | | |




| | | | |
|---|---|---|---|
| Ն.Գ.Ճ. | Ս. Հախյան | Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան | Մակնիշ- ՃՇ |
| Կոնստրուկտոր | Վ. Բաղալյան | «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարանային շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում էներգախնայող միջոցներով» | Փուլ: ԱՆ; Թերթ: 2; Թերթեր: |
| Նախագծեց | Ա. Տոշին | Տեղային իրավիճակային հատակագիծ | «ՀԱԿՅԱՆ» ՍՊԸ |

## Տիպային հարկի հատակագիծ (Չափագրական)




## Կտրվածք 1-1 (Չափագրական)




## Առաջին հարկի հատակագիծ (Չափագրական)




* Ընդհանուր տվյալները նայել ՃՇ թերթ-1
* Նյութերի և աշխատանքների մասնագրերը նայել ՃՇ թերթ-12

«ՀԱԽՅԱՆ» «АХЯН» «HAXYAN» 09422414 SYUNIK LIMITED LIABILITY COMPANY

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ն.Գ.Ճ. | Ս. Հախյան | | Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան | Մակնիշ- ՃՇ |
| Կոնստրուկտոր | Վ. Բաղալյան | | «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում էներգախնայող միջոցներով» | Փուլ: ԱՆ; Թերթ: 3; Թերթեր: |
| Նախագծեց | Ա. Տոշին | | | |
| | | | Առաջին հարկի հատակագիծ (Չափագրական) Տիպային հարկի հատակագիծ (Չափագրական) | «ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ |

## Տանիքածածկի հատակագիծ (Չափագրական)




## Վերնածածկի հատակագիծ (Չափագրական)




* Ընդհանուր տվյալները նայել ՃՇ թերթ-1
* Նյութերի և աշխատանքների մասնագրերը նայել ՃՇ թերթ-12

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան | Մակնիշ- ՃՇ |
| Ն.Գ.Ճ. | Ս. Հախյան | | «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում էներգախնայող միջոցներով» | Փուլ: ԱՆ; Թերթ: 4; Թերթեր: |
| Կոնստրուկտոր | Վ. Բաղալյան | | | |
| Նախագծեց | Ա. Տոշին | | | |
| | | | Տանիքածածկի հատակագիծ (Չափագրական) Վերնահարկի հատակագիծ (Չափագրական) | «ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ |

## Ճակատ ,,Ա,,-,,Գ,, առանցքներով (Չափագրական)




## Ճակատ ,,7,,-,,1,, առանցքներով (Չափագրական)




## Ճակատ ,,Գ,,-,,Ա,, առանցքներով (Չափագրական)




## Ճակատ ,,1,,-,,7,, առանցքներով (Չափագրական)




* Ընդհանուր տվյալները նայել ՃՇ թերթ-1
* Նյութերի և աշխատանքների մասնագրերը նայել ՃՇ թերթ-12

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ն.Գ.Ճ. | Ս. Հախյան | Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան | Մակնիշ- ՃՇ | |
| Կոնստրուկտոր | Վ. Բաղալյան | «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում էներգախնայող միջոցներով» | Փուլ: ԱՆ | Թերթ: 5 |
| Նախագծեց | Ա. Տոշին | | Թերթեր | |
| | | Ճակատներ Ա-Գ; 7-1; Գ-Ա; 1-7 առանցքներով (Չափագրական) | «ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ | |

## Տիպային հարկի հատակագիծ




## Կտրվածք 1-1




## Առաջին հարկի հատակագիծ




## Բազալտե հատակների հատույթ




* Ընդհանուր տվյալները նայել ՃԾ թերթ-1
* Նյութերի և աշխատանքների մասնագրերը նայել ՃԾ թերթ-12
* Տանիքի փայտե կոնստրուկցիաները նայել ՃԾ թերթ-13-:-18

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ն.Գ.Ճ. | Մ. Հախյան | | Պատվիրատու՝ Քաջարանի համայնքապետարան | Մակնիշ- ՃԾ | | |
| Կոնստրուկտոր | Վ. Բաղդյան | | «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Քաջարան քաղաքի Չարենցի 2 բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում էներգախնայող միջոցներով» | Փուլ | Թերթ | Թերթեր |
| Նախագծեց | Ա. Տոշին | | | ԱՆ | 6 | |
| | | | Առաջին հարկի հատակագիծ<br>Տիպային հարկի հատակագիծ<br>Կտրվածք 1-1 | «ՀԱԽՅԱՆ» ՍՊԸ | | |

# Տանիքածածկի հատակագիծ




# Վերնածածկի հատակագիծ




* Ընդհանուր տվյալները նայել ՃՇ թերթ-1
* Նյութերի և աշխատանքների մասնագրերը նայել ՃՇ թերթ-12
* Տանիքի փայտե կոնստրուկցիաները նայել ՃՇ թերթ-13-:-18
* Հատույթների և հանգույցների մանրամասները նայել ՃՇ թերթ-9-:-11
